ԺԱ.

1880—1890

ԵԳԻՊՏԱԿԱՆՆ Գահիրէի ու Աղեքսանդրիայի մէջ ալ Հայերը ձեռք բերած են երբեմն (մանաւանդ մինչեւ 1880) վաճառական ու սեղանաւորական կարեւոր դիրք։

Գահիրէ՝ կայան ու մայրաքաղաք Տէլդայի հինաւուրց ճոխ նահանգին և դիւցայինն Նեղոսի բարեբեր արգաւաւորութեանց, Աղեքսանդրիա՝ նաւահանգիստ ու վաճառաբաչխ նոր Տիւրոս-Սիդոն հանուր ծովափնեայ և անափնի ցամաքայինն Ափրիկէի՝ առեւտուրի սեղանաւորութեան և կալուածատիրութեան մեծ կեդրոններ էին ու են ցարդ, ուր Հայք՝ մանաւանդ ոսկերիչք, սեղանաւորք, կալուածատէրք, վաճառականք և պաշտօնեայք՝ փայլած են գլխաւորապէս 1855էն 1880 առատ և չռայլ շահերով։ Եգիպտոսի ոսկերիչներուն մէջ՝ մեղի ծանօթ է միայն Թորոս Քափամաճեան, սեղանաւորաց մէջ՝ Երամեանք, պետական պաշտօնեաներուն մէջ Ըէյիզեանք, Աբրահամ Բարթող փաշայ, Եագուպ Արթին փաշայ և այլք. հողատէր կալուածատերաց և վարչագիտաց գլուխ եղած են Առաքել Նուպար, և ինք Նուպար փաշայ, որոյ որդին՝ Պօղոս փաշայ Նուպար՝ արժանաւոր յաջորդութեամբ կրկնապատկած է այսօր իր նշանաւոր հօրը ձգած միլիոնները. նշանաւոր եղած է